

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Ա. ԱՅՐԱՀԱՄՅԱՆ

Ձևա-իմաստային հատկանիշներով օժտված կամ դրանցով պայմանավորվող լեզվական շատ իրակություններ՝ բառույթներ, բառաձևեր, կիրառական միավոր-նախադասության անդամներ, որպես ուսումնասիրության առարկա, լեզվաբանական գիտության համար հետաքրքրական են նաև իրենց կազմության կամ արտահայտության բնույթի տեսակետից: Այդ հայեցակետով լեզվական իրակությունների քննությունը կարող է ոչ միայն նպաստել յորանց աիշտ բնութագրմանն ու վերհանմանը, այլև ծառայել գործնական նպատակների: Չէ՞ որ մանավանդ լեզվական ամբողջական նշանակությունների ձևային տարանջատ դրսևորումները ուսումնասիրողի մեջ հաճախ կասկած են հարուցում՝ ձևային տվյալ տարանջատությունն ընդունե՞լ մեկ ամբողջություն, թե ոչ: Պարզ է, որ հստակ բնութագրումն ու սահմանազատումը դալիս են փարատելու նման տատանումները:

Հայտնի է, որ բառաձևերի կազմության բնույթի հաշվառումով լեզվաբանությունը տարբերում է համադրական (սինթետիկ) և վերլուծական (անալիտիկ¹) տեսակներ: Մյուսնք արտաքուստ ձևային հակադրություններ են, որոնք, իհարկե, ունեն նաև իմաստային հիմնավորվածություն ու պայմանավորվածություն: Եթե իմաստային ամբողջականության պայմաններում համադրականությունը ներկայանում է կազմիչ մասերի ձևային միասնությամբ, ապա վերլուծականության դեպքում առկա է լինում այդ կազմիչ մասերի ձևվային տարանջատությունը: Այսպես օրինակ՝ ռուսերենի *напишу* և *буду писать* բառաձևերը թեև միևնույն *писать* բայի նույն դիմային (1-ին դեմք), թվային (եղակի), եղանակային (սահմանական), ժամանակային (ապառնի) նշանակություններն են արտահայտում և տարբերվում են միայն կերպով (առաջինը՝ կատարյալ, երկրորդը՝ անկատար), սակայն տարբեր են կազմության բնույթով: *Напишу* համադրական բնույթ ունի, որովհետև նրա կազմիչ մասերը ըստ ձևի համադրված են, իսկ *буду писать* թեև իբրև դիմավոր ձևի հասկացություն մեկ ամբողջություն է, բայց ըստ ձևի կազմված է *буду* և *писать* մասերի հարադրումով, վերլուծական կազմություն է: Կամ՝ անգլերենում *(he) works*² և *(he) is working* դեմքով (3-րդ), թվով (եղակի), ժամանակով (ներկա), եղանակով (սահմանական) նույնն են, քերականական նշանակությամբ միայն տարբեր են ըստ կերպի. առաջինը անորոշ կերպի ժա-

¹ Ռուսագիտության մեջ *аналитический* տերմինին դուգահեռ հատկապես ձևի նշման համար գործածում են նաև *описательная* (форма), *составная*, *сложная* հորջորջումները: Հմտ., օրինակ, Օ. Տ. А х м а н о в а, Словарь лингвистических терминов, М., 1966: Այդպիսի հորջորջումներ կան նաև հայերենում:

² Ընտրել ենք եղակի երրորդ դեմքը, որ երևա համադրականությունը. մյուս դեմքերի ձևվերը «մերկ» են և համադրում չունեն:

մանակային ձև է, երկրորդը՝ շարունակական: Նրանք տարրեր են նաև կադմության բնույթով. (he) works համադրական կադմություն ունի, (he) is working՝ վերլուծական: Ժամանակակից հայերենում անգլերենի հիշյալ երկու ձևերի համապատասխան իմաստները կարտահայտվեն մեկ՝ վերլուծական ձևով. աշխատում է մեր լեզվում նշանակում է և՛ «աշխատում է ընդհանրապես», և՛ «աշխատում է հենց այս պահին»: Յուրաքանչյուր լեզվի մեջ, իհարկե, չկան քերականական համամասն իրակությունների համադրական ու վերլուծական պարտադիր կրկնակներ: Կարող են կա՛մ համադրական, կա՛մ վերլուծական կադմությամբ լինել: Այսպես. ժամանակակից գրական հայերենի բայի սահմանական եղանակի անցյալ կատարյալը միայն համադրական կադմությամբ է, ինչպես՝ կարդացի, իսկ, ասենք, ներկան վերլուծական է՝ կարդում եմ և այլն: Կա՛մ՝ գերմաներենում ներկան համադրական է (չենք խոսում կրավորականի մասին), ինչպես՝ (ich) lese, իսկ, օրինակ, Perfekt-ը վերլուծական է՝ (ich) habe gelesen և այլն: Համադրականության դեպքում կադմվող միավորը որքան էլ բաղմաձևույթ լինի, միևնույն է, բոլոր ձևույթները համադրվում են ձևային մեկ ամբողջության մեջ, ինչպես՝ на-пиш-у, work-s, կարդ-աց-ի, les-e և այլն: Բայց վերլուծական կադմությունների մեջ էլ հարադրվող մասերում կարող է համադրվածություն լինել, ինչպես՝ ge-les-en, work-ing, быд-у և այլն: Այդ մասին՝ հետո:

Համադրական բնույթի կադմությունն ինքնըստինքյան հասկանալի է և ընկալման ու որոշման որևէ դժվարություն չունի, ուստի դրան չենք անդրադառնա: Այստեղ մեր քննության առարկան լինելու է վերլուծական բնույթի կադմությունը³:

Վերլուծականության ու համադրականության հակադրությունը ցույց տալու համար իբրև նմուշ մենք բերեցինք բառաձևերի օրինակներ (ձևաբանական մակարդակ): Սակայն բանն այն է, որ հարցը այդպիսով բնավ էլ չի սահմանափակվում: Նկատելի է, որ գիտական գրականության մեջ ուսումնասիրողները, խոսելով վերլուծական բնույթի կադմության մասին, սովորաբար ծանրանում են բառաձևերի (քերականական ձևերի) վերլուծականության վրա, իսկ ոմանք վերլուծականություն ասելով որոշակիորեն նկատի են ունենում միմիայն քերականական ձևակադմության (ձևաբանական) հենց այդ վերլուծականությունը⁴: Ոմանք էլ հարցին մոտենում են նաև խոսքի մասերի բառակադմության տեսանկյունից⁵: Կան մասնագետներ, որոնք, խնդրին մոտե-

³ Նման հարցեր մասնակիորեն շոշափել ենք բայի բառակադմական և քերականական որոշ գրականության կապակցությամբ մեր «Եայր ժամանակակից հայերենում» աշխատության մեջ, դիրք առաջին, Երևան, 1962:

⁴ Հմմտ., օրինակ, վերջին տասնամյակների ուսումնասիրություններից А. И. Смирницкий, Аналитические формы, «Вопросы языкознания», 1956, № 2, էջ 41—52, В. И. Ярцева, Об аналитических формах слова, «Морфологическая структура слова в языках различных типов» (ժողովածու), М.—Л., 1963, էջ 52—60 և այլն:

⁵ Տե՛ս, օրինակ, И. А. Смирнова, К вопросу отграничения слова от свободного синтаксического сочетания, նույն ժողովածու, էջ 283—289, այլև՝ В. П. Винокурова, Грамматика английского языка, Л., 1954, էջ 21, И. В. Арнольд, Лексикология современного английского языка, М., 1959, էջ 167 և այլն: Հիշենք նաև, որ ավելի առաջ Վ. Վ. Վինոգրադովի բոլոր կադմության բնույթները և ուսերենի նախդիրների և շաղկապների «составные» (բոլոր էություն՝ վերլուծական) տեսակներ՝ նախօրոք խոսած լինելով նաև առհասարակ բառի այդպիսի կադմության մասին: Տե՛ս «Русский язык», М.—Л., 1947, էջ 683, 707, 717, 24, 28 և այլն:

նալով նաև բառակազմական կողմից, բառերի վերլուծական (հարադրական) կազմությունները տարբերում են բարդություններից՝ ընդունելով «СЛОЖЕНИЕ СЛОВА» և «СОСТАВННЕ СЛОВА» հակադրությունները. առաջինների մեջ ներառում են ձույլ կամ համադրական բարդությունները, երկրորդների մեջ՝ վերլուծականները կամ հարադրությունները⁶։ Բայց այդպիսի տարբերակման հարկ չկա, և ճիշտ է, որ հայերենագիտության մեջ բարդություններ են դիտվում թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակները։

Այսպիսով տեսնում ենք, որ բառափոխական հանգամանքներում ընդհանուր առմամբ վերլուծականությունը չի վիճարկվում (նկատի չունենք առանձին ձևերի գնահատումը), իսկ բառակազմության բնագավառում գիտության մեջ խնդիրն այնքան էլ հստակ չէ, բայց, այնուամենայնիվ, լիովին չի անտեսված։ Շարահյուսության մեջ էլ հանրահայտ է բաղադրյալ անդամի (հատկապես այդպիսի ստորոգյալի) ընդունումը։ Սակայն միշտ չէ, որ նախադասության անդամի այդպիսի արտահայտությունը դիտվում է լեզվական այլ միավորների վերլուծական դրսևորումների ընդհանուր կտրվածքով, երբեմն էլ՝ ըստ նրանց առնչումների։ Մինչդեռ դա խիստ անհրաժեշտ է։

Դրությունը գրեթե նույնն է հայերենագիտության մեջ։ Այստեղ, իհարկե, շատ բան կարելի է գտնել և՛ հարադրությունների, և՛ բայի բաղադրյալ ժամանակների, և՛ նախադասության բաղադրյալ անդամների (հատկապես ստորոգյալի, մասամբ և ուրիշների) մասին։ Դրանք քննվում ու բնութագրվում են ըստ համապատասխան բնագավառների՝ մեծ մասամբ միմյանցից կտրված և ոչ երբեք մեկ ընդհանուր հայեցակետով։ Մասնագետին բնավ էլ չի կարելի կշտամբել նրա համար, որ նա լեզվական երևույթը քննարկում ու բնութագրում է համապատասխան բաժնում՝ առանձնացած։ Բայց երբեմն էլ լինում են դեպքեր, երբ անհրաժեշտություն է առաջ գալիս որոշ ընդհանուր կամ համանման կողմեր ունեցող լեզվական տարբեր միավորները դիտել այդպիսի ընդհանուրի կամ համանմանի տեսանկյունից։ Հենց այստեղ մենք գործ ունենք այդպիսի մի անհրաժեշտության հետ։ Քանի որ լեզուն կառուցվածքահամակարգային այնպիսի ամբողջություն է, որի մեջ լեզվական բաղմամբիվ աարբերը զանազան հարաբերություններով կապված են միմյանց հետ ու ներկայանում են յուրատեսակ ենթահամակարգերով, ուստի լեզուն ուսումնասիրող գիտության խնդիրն է նաև քննել ու բացահայտել ինչպես լեզվական տարբեր միավորների էությունն ու առանձնահատկությունները, նույնպես և նրանց ընդհանուր կողմերն ու առնչումները։

Առաջժմ թողնելով տարբեր միավորների առնչումների հարցը՝ վերցնում ենք նրանց ընդհանուր կամ համանման կողմերը։ Հայտնի է, որ լեզվական իմաստակիր միավորները իմաստայինի հետ (բովանդակության գիծ) ունեն նաև ձևային կողմ (արտահայտության գիծ)։ Իսկ ձևային կողմը ըստ արտասանության՝ հնչյունային (հնչյութային) դրսևորումն է՝ հնչյունական նյութական պատյանով, զրավոր արտահայտվելիս՝ զրային պատկերումն է։ Կազմության բնույթն արտահայտվում է հենց այդ կողմով, ուստի լեզվական իմաստակիր տարբեր միավորներ կարող են ընդհանրություններ կամ համանմանություններ ունենալ կազմության այդ իսկ բնույթով։

⁶ Տե՛ս Մ. Е. А н н ч к о в, Об определении слова, „Морфологическая структура...“ (ժողովածու), М.—Л., 1963, էջ 154—155։

լեզվական միավորների տեսակավորումն ըստ կազմության կարող է լինել բաղադրությունների ոլորտում: Հասկանալի է, որ եթե տվյալ միավորը իր հերթին կազմված չէ ուրիշ իմաստակիր միավորներից, այլ՝ որպես իմաստակիր միավոր, միակտուր է, ապա նրա կազմության տարբեր տեսակների մասին խոսք լինել չի կարող: Կազմության բնույթով տարբեր տեսակներ կարող են ունենալ այնպիսի իմաստակիր միավորները, որոնք իրենց հերթին կազմված են լինում կամ ըստ խոսքային պայմանների կազմվում են մեկից ավելի ալլ իմաստակիր միավորներից: Այստեղ իմաստակիր անվանումը մենք գործածում ենք լայն առումով՝ դրա տակ հասկանալով «լեզվական ամեն մի իմաստ կամ նշանակություն կրող»: Իմաստը կամ նշանակությունը բաղադրությունների մեջ կարող է լինել բառային, քերականական, քերականական-կիրառական: Եթե սիրտ միավորը համապատասխան իմաստն արտահայտում է առանց ուրիշ իմաստակիր միավորի հետ բաղադրված լինելու, ուրեմն այդ առումով այն միատարր է, միակտուր է, ուստի կազմության բնույթով տարբեր տեսակներով մեզ չի կարող ներկայանալ⁷: Իսկ, ասենք, սրտային-ը՝ որպես բառային իմաստակիր մեկ միավոր, բաղկացած է լեզվական իմաստակիր երկու միավորներից՝ սրտ(սիրտ)-ային: Պարզ է, որ այս դեպքում կարող ենք ասել, թե ըստ կազմության ձևի բաղադրիչներն ի՛նչ բնույթով են զուգակցված: Եթե սիրտ միակտուր կազմություն է, ապա սրտային միակտուր չէ, այլ երկձևույթ է: Տալ բառը թեև իր հնչյունային (հնչույթային) կազմով ավելի փոքր է, քան սիրտ-ը, բայց ըստ իմաստային բաղադրիչների միատարր չէ, կազմված է տ(տու) և ալ իմաստակիր բաղադրիչներից (ալ-ն էլ իր հերթին կազմված է ա-լ միավորներից): Բայց մեկ ամբողջական միավորի արժեքով մեզ կարող է ներկայանալ սիրտ և տալ բառերի զուգակցումը՝ սիրտ տալ: Սա՝ իբրև մեկ ամբողջական իմաստակիր միավոր, արդեն կունենա կազմության այլ բնույթ, իբրև մեկ բառ՝ կլինի վերլուծական կազմությամբ: Օրինակների ցուցադրումը չենք շարունակում, որովհետև ստորև խոսելու ենք տարբեր միավորների համանման կազմությունների մասին:

Վերլուծականության մասին խոսելիս բնականաբար մենք դա պետք է փնտրենք լեզվի այն մակարդակներում կամ բաժիններում, որտեղ իսկապես գոյություն ունի: Այդպիսով գործ կունենանք երեք մակարդակների, այն է՝ բառային, ձևաբանականի և շարահյուսականի⁸ հետ, որովհետև ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ լեզվական միավորների դրսևորումների մեջ կազմության վերլուծական բնույթը հանդես է գալիս հենց այդ մակարդակներում կամ բաժիններում: Կազմության կամ արտահայտության բնույթով վերլուծական կարող են լինել այս մակարդակների միավորները՝ բառույթներ, բառաձևեր, ինչպես և նախադասության այնպիսի անդամներ, որոնք «նյութապես» լիովին չեն համընկնում բառույթներին ու բառաձևերին: Կանգ առնենք սրանց վրա մեր խնդրի հայեցակետից: Բայց նախքան այդ

⁷ Այս դեպքում, իհարկե, նկատի չունենք այն, որ այստեղ կա հնչույթների համադրում, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին իմաստակիր միավոր չէ:

⁸ Չխոսելով լեզվի այլ մակարդակների կամ բաժինների մասին՝ տարբեր մակարդակներ ենք համարում բառայինը, ձևաբանականը ու շարահյուսականը և չենք դավանում այն տեսակետը, ըստ որի բառային մակարդակը միացվում է ձևույթայինին և առնվում է որպես մեկ՝ նշանային մակարդակ: Տե՛ս, օրինակ, Э. Бепвенист, Уровни лингвистического анализа, „Новое в лингвистике“, вып. IV, М., 1965, էջ 439:

պետք է պատասխանել այն հարցին, թե ի՞նչն է մեզ ստիպում տարանջատ կազմիչ մասերը ներառել մեկ ամբողջության մեջ և այն դիտել որպես վերլուծական մեկ ամբողջություն՝ իր հարադրվող կազմիչ մասերով: Դրա պատճառը, ինչպես վերն էլ մասամբ նշեցինք, այդպիսիների իրական գոյությունն է և ճանաչման ու գնահատման անհրաժեշտությունը: Բայց այդ իրողությունն ինչպե՞ս է հանդես գալիս լեզվական տարբեր մակարդակներում: Բանն այն է, որ լեզվական կառուցվածքային յուրաքանչյուր մակարդակ իր յուրահատկությամբ ծառայում է համապատասխան նպատակի: Իսկ դա իրագործվում է այդ մակարդակների միավորների միջոցով: Այդ միավորներում էլ կազմիչ մասերի հարադրումները բխում են հենց այդպիսի նպատակներից: Իսկ դրանք կարող են լինել թե՛ բառային իմաստների և թե՛ քերականական (ձևաբանական և շարահյուսական) նշանակությունների արտահայտման նպատակներ: Եվ քանի որ տարբեր նպատակների ուղղված հարադրումներ են լինում՝ ըստ լեզվի տարբեր մակարդակների, ուստի վերլուծականությունն արտահայտվում է տարբեր մակարդակներում՝ ունենալով տարբեր հիմնավորվածություն ու յուրահատկություն: Այստեղից ելնելով էլ նախօրոք պետք է նշենք, որ վերլուծականությունն իր նպատակայնությամբ և դերով լեզվական տարբեր մակարդակներում տարբեր է:

Լեզվի բառապաշարի կամ բառային կազմի կառուցվածքային միավորը բառույթն է (лексема-ն), որը նույն բառն է՝ որպես լեզվի կառուցվածքային միավոր: Բառույթի հասկացության և համապատասխան անվանման վերաբերյալ գիտության մեջ կան զանազան բացատրություններ՝ ըստ տարբեր տեսակետների: Մենք այստեղ տարակարծությունների բավիղների մեջ չենք մըտնում, այլ նշում ենք այն, ինչ պատկերացնում ու դավանում ենք: Այսպես ուրեմն՝ բառույթը լեզվի կառուցվածքային միավոր է բառային մակարդակում: Այն լեզվական այնպիսի ինքնուրույն միավոր է, որն օժտված է իմաստի որոշակիությամբ (կոնկրետությամբ) ու ամբողջականությամբ, ձևային-հընչյունական կայունությամբ և արտասանական միավորվածությամբ: Գիտությունը բառույթը ըստ իրական հիմքի սահմանում է՝ բառը բառան-ից (словоформа) որոշակիորեն տարբերելու համար: Անկախ կազմիչ մասերի միավորման բնույթից՝ բառ-բառույթի ինքնուրույնության ու ամբողջականության հիմքը բառային որոշակի իմաստի ամբողջականությունն է, որի վրա էլ խարըսխվում են մյուս հատկանիշները՝ ձևային կայունությունը և արտասանական միավորվածությունը: Եվ քանի որ կան բառույթի ամբողջականությունը պահպանող այդպիսի գործոններ, այդ պատճառով էլ լեզվի մեջ բառույթը որպես այդպիսին կարող է ներկայանալ նաև այն դեպքում, երբ նրա կազմիչ մասերը ըստ ձևի տարանջատ են: Ահա այստեղից էլ հնարավոր է դառնում վերլուծականության դրսևորումը բառույթի մեջ, ավելի լայն առումով՝ լեզվի բառային մակարդակում: Մեր լեզվում պար և գալ առանձին-առանձին բառային ուրույն միավորներ՝ բառույթներ են և միմյանց հետ էլ կապ չունեն: Թե՛ պար-ը, թե՛ գալ-ը առանձին վերցված ունեն վերոհիշյալ բոլոր հատկանիշները: Բայց պար գալ հարադրության մեջ արդեն նրանք ինքնուրույն բառույթներ չեն, այլ մեկ ամբողջական բառույթ է հարադրությունը՝ պար գալ-ը, որն այդպիսով բառային կազմի կառուցվածքային մեկ այլ միավոր է՝ իր հերթին օժտված որոշակի իմաստի ամբողջականությամբ (մեկ բառիմաստով՝ «պարել»), ձևային կայունությամբ (բարդության կազմիչ մասերի հա-

րադրվածությամբ, որը լեզվի մեջ կայունացել է), արտասանական միավորվածությամբ (բարդության առաջին մասի վրա ընկած բառային ուժեղ շեշտը արտասանական մեկ ոլորտում է պահում նաև երկրորդ մասը. ոչ թե պա՛ր, գա՛լ, այլ՝ պար գալ): Իհարկե, արտասանական միավորվածությունն ասելով հասկանում ենք կազմիչ մասերի՝ արտասանական մեկ ընդհանուր ոլորտում լինելը՝ ըստ բառի արտասանական սահմանագծման: Միաժամանակ նշենք, որ այդպիսի միավորվածությունը զգալապես տարբերվում է մասերի ձույլ արտասանությունից, այլապես չէինք ունենա այդպիսի հարադրական բարդություն, այլ կունենայինք պարգալ համադրական (տվյալ դեպքում՝ կցական) բարդություն:

Այսպիսով՝ ըստ մեր օրինակների՝ ունենք բառային կազմի երեք ինքնուրույն միավորներ՝ պար, գալ և պար գալ: Եթե սրանք վերլուծենք ձևույթաբանորեն, ապա կտեսնենք, որ առաջինը (պար) միաձևույթ է, մեկ հիմնական ձևույթից է կազմված և որպես այդպիսին «մերկ» է (արմատական բառ է), երկրորդը (գալ) բաղմաձևույթ է՝ գ-ա-լ, ունի մեկ հիմնական (գ) և երկու երկրորդական (ա, լ) ձևույթներ (վերջիններս միասնաբար կազմում են անորոշ դերբայի -ալ մասնիկը): Ձևույթներն այստեղ համադրված են: Երրորդ բառույթը (պար գալ), հասկանալի է, նույնպես բաղմաձևույթ է, քանի որ իր մեջ պարունակում է նախորդ բոլոր ձևույթները: Կազմությամբ այն բարդ բառ է. որովհետև իր մեջ ընդգրկել է երկու բառ, որոնք պարունակում են մեկական հիմնական ձևույթներ: Իսկ, ինչպես հայտնի է, բարդության էական հատկանիշը երկու կամ ավելի հիմնական ձևույթների, բառերի կամ հիմքերի միավորվածությունն է՝ բառիմաստային մեկ ամբողջության արտահայտման հիման վրա: Այդ կազմիչ մասերի միավորումը կարող է լինել կա՛մ համադրումով (բաջասիրտ, գործիմաց, դեռահաս, ջրվեժ և այլն), կա՛մ հարադրումով, վերլուծաբար (կանգ առնել, հոգ տանել, խոսքի մաս և այլն): Վերը բերված մեր օրինակը՝ պար գալ բառույթը, վերլուծական կազմություն ունի, քանի որ այդ բարդության կազմիչ մասերը (պար և գալ) ոչ թե համադրված, այլ հարադրված են, այլ կերպ ասած՝ մեկ ամբողջության մեջ միավորված են վերլուծաբար: Ուրեմն այդ բառույթն ունի վերլուծական կազմություն: Վերլուծական այդպիսի կազմությունը ակնբախ է ինքնին, բայց և նրա յուրահատկությունն առավել ընդգծված է երևում մեր լեզվում գոյություն ունեցող՝ հիշյալ բարդ բառի պարզ տարբերակի համեմատությամբ՝ պարեւ և պար գալ: Այդ պարզ տարբերակը կազմված է պար արմատից և -եւ մասնիկից՝ համադրումով: Այսպիսով մենք ունենք միեւնույն բառույթ-բառի համադրական (պարեւ) և վերլուծական (պար գալ) տարբերակներ: Բայց պարտադիր չէ, որ բոլոր բառույթներն ունենան կազմության այդպիսի զուգահեռություններ, և, բացի դրանից, եղած զուգահեռություններն էլ բառային արժեքով շատ ավելի տարբեր են լինում, քան նույնական: Ուրեմն բառի վերլուծական կազմությունը համադրական կազմության սոսկ ավելորդ կրկնակը չէ, այլ՝ բառակազմության յուրահատուկ տեսակ՝ ուղղված հատուկ նպատակների: Այստեղից էլ պարզ է, որ բառային կազմի մակարդակում վերլուծականությունն ընդունվում է ոչ թե անպայման մեկ բառույթի կազմության տեսակների, այլ ընդհանրապես բառույթ-բառերի կազմության տարբեր եղանակների հակադրությամբ:

Ժամանակակից գրական հայերենի բառային կազմի մակարդակում վերլուծականությունն արտահայտվում է բառաբարդության ոլորտում՝ հարադրական բարդությունների մեջ: Այստեղ վերլուծական կազմություն ունեցող բառային միավորը (բառույթը) բարդ բառ է: Այդպիսի բարդ բառերը, սկսած Մ. Աբեղյանի ժամանակներից, հայերենագիտության մեջ նշվում են հաճախակի անվանումով: Հայտնի է, որ մեզանում այդպիսի բարդ բառերի ուսումնասիրությունն սկսվում է բայական յուրահատուկ միավորումների, «ոս»-երի նկատումով: Դրաբարի համար տպագիր շրջանի առաջին քերականները (Կ. Գալանոս, Ս. Զուղայեցի, Հ. Կոստանդնուպոլսեցի և այլք) արդեն նկատել էին և իրենց աշխատություններում նշել բայական սիմբոլիզական բառիմաստների արտահայտող այդպիսի զուգակցությունների օրինակներ: Իսկ աշխարհաբարի համար համանման փաստեր էր մատնանշել Սկրոդերը (Շրեոդեր)⁹ և Ս. Աբովյանը, մատնացույց անելով իր ժամանակի աշխարհաբարի ոգուն հարազատ բայական մի շարք հարադրություններ, անվարան կերպով նշում է, որ այդտեղ բայերը բարդված են մի շարք բառերի հետ¹⁰: Այլ կերպ ասած՝ նա դրանք որոշակիորեն կազմությամբ բարդ բառեր է համարում: Արևելահայ աշխարհաբարի հաջորդ քերական Ատ. Պալասանյանը, սակայն, բայական հարադրությունները անվերապահորեն բարդություն չի համարում, այլ նշում է որպես կազմության առանձին տիպ՝ բաղադրյալ հորջորջումով: Նա, խոսելով բայերի բառային կազմության մասին, ընդունում է պարզ (գովել, բնակիլ, կարդալ, բարկանալ), բարդ (պատուասիրել, կառավարել, վարձատրել) և բաղադրյալ (ձայն տալ, աչք ածել, պար գալ, կուլ գնալ) բայեր¹¹: Այսպիսի բաժանմամբ բարդ բառերից որոշակիորեն առանձնացված են բայական հարադրությունները: Մ. Աբեղյանը դրանք, ինչպես և այլ արժեք ունեցող հարադրությունները վերջնականապես ներառում է բարդ բառերի համակարգի մեջ¹²: Եվ այդ ոգով էլ տարվում են հետագայի բոլոր ուսումնասիրությունները: Այդ ուսումնասիրությունների վրա այստեղ կանգ չենք առնի, սակայն պետք է նշենք միայն, որ հայոց լեզուն այս բնագավառում ցուցաբերում է յուրօրինակ հսկայական հարստություն ու բազմազանություն և մեծ հնարավորություններ է ընձեռում հետազոտողին:

Հարադրությունները, որքան էլ բազմազան լինեն թե՛ ըստ հորինվածքային ներքին տեսակների և թե՛ ըստ խոսքիմասային արժեքի, բարդություններ են և, հասկանալի է, բառակազմական հայեցակետից պետք է դիտվեն բարդ բառերի ոլորտում և պետք է գնահատվեն բարդության մյուս տեսակների հանդիպադրումով, բարդ բառերի ընդհանուր համակարգում:

Բառերի կազմության մեջ համադրական և վերլուծական հորինվածքների հակադրության տեսանկյունով բարդությունների առավել ընդհանուր խմբավորումներ կարելի է կատարել:

Հայերենագիտության մեջ, ինչպես հայտնի է, այժմ ընդունված է ամենաընդհանուր խմբավորումներով բարդությունները բաժանել իսկական և ան-

⁹ Schröder. Thesaurus linguae Armenticae..., Amstelodami, 1711, էջ 323:

¹⁰ Ս. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 5, Երևան, 1950, էջ 143—144:

¹¹ Տե՛ս Ստ. Պալասանյան, Քերականութիւն մայրենի լեզուի, մասն 2-րդ, Թիֆլիս, 1884, էջ 65:

¹² Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931, համապատասխան րաժինը:

իսկական տեսակների: Այդպիսի ըմբռնմամբ հայագիտությունը պարտական է Մ. Աբեղյանին: Իր նշանավոր «Հայոց լեզվի տեսություն» աշխատության մեջ Մ. Աբեղյանը խորությամբ ու լայնությամբ հետազոտել և գիտականորեն բնութագրել է արևելահայ աշխարհաբար լեզվի բառակազմությունը՝ միաժամանակ ցուցաբերելով պատմական մոտեցում: Այսպիսով մեր լեզվի բառակազմության քննությունը բարձրացվեց գիտական երևելի մակարդակի: Աբեղյանը բարդությունները քննելիս ընթանում է անիսկականից դեպի իսկականը: Այսպիսով փաստորեն տեսակավորման հիմքում դրվում է կազմավորման աստիճանը՝ միաժամանակ ձևա-իմաստային հատկանիշների հաշվառումով¹³: Նա ուղղակիորեն նշում է բարդ բառերի կազմության աստիճանավորումները և նախ այդ նկատառումով բարդությունները բաժանում է երեք տեսակի՝ հարադրությունների, կցական բարդությունների և իսկական բարդությունների¹⁴, ապա բուն հետազոտական մասում առաջին երկուսը միավորում է մեկ վերնագրի տակ՝ իսկական բարդություններից առանձին: Այսպիսով նա հարադրական ու կցական բարդությունները միասին վերցրած հակադրում է իսկական բարդություններին: Բառաբարդության տեսությամբ հետաքրքրվողներին տեղյակ պահելու նկատառումով նշենք, որ նմանօրինակ մոտեցում եղել է լեզվաբանական գիտության մեջ նաև այլ լեզուների համար: Հիշենք, օրինակ, որ Հ. Գրիմը գերմաներենի գոյական անունների կազմության մասին խոսելիս ընդունում է լիակատար բարդ կամ իսկական և ոչ լիակատար բարդ կամ կեղծ, անիսկական կազմություններ (eigentliche und uneigentliche Zusammensetzungen)¹⁵:

Մ. Աբեղյանն իր եզրակացությունները բխեցրել է հայոց լեզվի խիստ հարուստ նյութի խորաքննի հետազոտությունից և իր բնութագրումների մեջ իրավացի է. նրա դասակարգումը գիտական է ու ընդունելի: Սակայն, ինչպես վերը նշեցինք, բարդ բառերի հորինվածքի համադրական ու վերլուծական տեսակների հակադրությունը հնարավորություն է տալիս այդ կազմությունները դիտելու և գնահատելու հենց այդ տեսանկյունից: Այս դեպքում խմբավորման հիմքում կդրվի հորինվածքային բնույթը, որը, իհարկե, տարբերություն կունենա կազմավորման սկզբունքով կատարված խմբավորման հանդեպ, բայց կներառի բարդ բառերի բոլոր տեսակները:

Ըստ այդ սկզբունքի¹⁶ կունենանք երկու տիպի բարդություններ՝ ա) վերլուծական, բ) ճամադրական: Այս ընդհանուր խմբերը կներառեն ժամանակակից գրական հայերենի բոլոր տեսակների բարդ բառերը: Այդուհանդերձ կը պահպանվեն համապատասխան ենթատեսակներն ըստ կազմավորման աստիճանի:

13 Հմմտ. նույն տեղում, էջ 170—211:

14 Տե՛ս նույն տեղում, էջ 170—171:

15 J. G r i m m, Deutsche Grammatik, II, Berlin, 1878.

16 Բառակազմական առումով վերլուծական և համադրական տիպերին մենք անդրադարձել ենք ժամանակակից հայերենի բայերի բառական կառուցվածքի բնութագրության մեջ (տե՛ս Ա. Ա. Արրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, դիրք I, էջ 46, 47, 137, 156, 160 և այլն), իսկ այստեղ բնութագրման նմանօրինակ սկզբունքով դիտում ենք մեր լեզվի բարդ բառերի բոլոր տեսակները՝ ըստ վերլուծական և դրան հակադիր համադրական կազմությունների:

Վերլուծական բարդությունների մեջ կմտնեն հարադրություններն իրենց բոլոր ենթատեսակներով: Դրանք հետևյալներն են՝ 1) բայական հարադրություններ (կարգի բերել, լույս ընծայել, դուրս գալ, ուշաթափ լինել, պոկ գալ, խույս տալ, կտրել-անցնել, ասել-խոսել, վեր կենալ-գնալ և այլն)¹⁷, 2) անվանական հարադրություններ (պատի թերթ, խոսքի մաս, եզան լեզու (բուսանուն), պատվո պահակ, հավատո հանգանակ¹⁸, հազար հարյուր քառասուն, հարյուր հինգ, հինգ հազար հարյուր ութ և այլն, 3) խոսքիմասային տարբեր արժեքներ ունեցող բաղճյուսական հարադրություններ (ահ ու դող, հալ ու մաշ, լռիկ-մնչիկ, գիշեր-ցերեկ և այլն), 4) հարադրական կրկնավորներ՝ զանազան խոսքի մասերի կրկնություններով և քերականական տարբեր արժեքներով (տեսակ-տեսակ, տեղ-տեղ, տառ առ տառ, մանր-մանր, արագ-արագ, հինգ-հինգ, այլև՝ հնչյունափոխված կրկնավորներ՝ մարդ-մուրդ, աման-չաման և այլն): Նկատենք, որ հարադրվող մասերի միջև գրության մեջ գծիկի գործածությունը մի տեսակ կամուրջ է վերլուծականությունից դեպի համադրականությունը (տվյալ դեպքում՝ հարադրությունից դեպի կցական բարդություն):

Համադրական բարդությունների մեջ կմտնեն այն բարդ բառերը, որոնց կազմիչ մասերը համադրված են. այդպիսի բարդությունները բառիմաստային ամբողջականության հետ ունեն նաև կազմիչ մասերի ձևային միասնություն: Դրանք են՝ 1) իսկական բարդությունները, իրենց տարբեր տեսակներով (հոդակապով իսկական բարդություններ՝ լուսամուտ, երկնակամար, լայնաթիկունք, նստաշրջան, հարցազրույց և այլն, անհոդակապ իսկական բարդություններ՝ լրջմիտ, ջրվեժ, ջրմուղ, հացթուխ, քարտաշ և այլն, և, իհարկե, այնպիսիները, որոնք հոդակապ չունեն երկրորդ կազմիչի՝ ձայնավորով ըսկըսվելու պատճառով՝ դասընթաց, շրջանավարտ, վերջերգ, ձկնորս և այլն), 2) բոլոր տեսակի կցական բարդությունները (բայական հարադրություններից կազմված կցական բարդություններ՝ գործածել, ակնածել, բայական հարադրությունների հիման վրա ածանցումով կազմված բարդություններ՝ իրարանցում, առաջաշում, մեջբերում և այլն, բաղճյուսական հարադրություններից առաջացած կցական բարդություններ՝ առևտուր, ելևէջ, մինուճար, կերուխում, խորդուբորդ և այլն, շարահյուսական այլևայլ կապակցությունների համադրականությամբ առաջացած կցական բարդություններ՝ հորեղբայր, մորեղբայր, տանտիկին, կեսգիշեր, կեսօր, այսօր, այսչափ, այսքան, նույնքան, այսինքն, այնինչ, մեկտեղ, մեջտեղ, այսօրինակ, նմանօրինակ, տարեց-տարի, վերջիվերջո, խոչընդոտ և այլն, նախադասությունների ամփոփումով ու բառացումով առաջացած բարդություններ՝ որևէ, ովևէ, ինչևէ, տերողորմյա և այլն, թվականների միավորումով առաջացած կցականներ՝ տասնհինգ,

¹⁷ Այստեղ հիշատակում ենք բայական հարադրությունների միայն մի քանի օրինակներ՝ առանց ենթատեսակների բաժանման: Դրանց մասին մասնավորապես տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, դիրք I, Ա. Մարգարյան, Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:

¹⁸ Անկասկած է, երբեմնի քերականական այս բառակապակցությունները մեր լեզվի ներկա շրջանում արդեն բառային ընդհանուր արժեք ունեն և կազմությամբ հարադրություններ են: Քանի որ ավանդարար բայական հարադրություններն ընդունվում են իբրև կազմության առանձին ենթատեսակ, ուստի այդ նկատառումով մենք էլ սրանք նշում ենք առանձին կերպով:

քսանհինգ, իննսունութ և այլն, կրկնավոր կցականներ (ղանաղան այլ բաղա-
գրիչներով կամ առանց դրանց, ինչպես՝ գույնզգույն, կաղիկաղ, մեջընդմեջ,
սարսուռ, վառվռուն և այլն), բայական համադրական կրկնավորներ (քաշ-
քշել, ծակծկել, վաղվել, թշնամել, խոխուխու, զոռզոռալ և այլն)։

Ըստ հորինվածքային բնույթի կցական բարդությունները իսկականների
հետ մեկ ընդհանուր խմբի մեջ ներառելը սոսկ ձևական մոտեցման արդյունք
չպետք է համարել։ Չենթ ժխտում, իհարկե, որ այսպիսի համախմբումը առա-
ջին հերթին հենվում է կազմիչ մասերի՝ ըստ ձևի ունեցած համադրվածության
վրա։ Չենթ ժխտում նաև, որ այդ երկու կարգի բարդությունների կազմիչ մա-
սերի ներքին իմաստային կապը տարբերություն ունի։ Իսկականների մեջ այն
ավելի սերտ է, քան կցականների մեջ։ Բայց միաժամանակ պետք է ընդգծենք,
որ իբրև բարդություններ հարադրությունների համեմատությամբ կցականներն
ավելի մոտ են կանգնած իսկական բարդություններին, թեև այդուհանդերձ
նույնական չեն։ Ծիշտ է, որ կցական բարդությունների կազմիչ մասերը հեշ-
տությամբ կարող են բաժանվել (ինչպես՝ այսօր և այս օր, այսօրինակ և այս
օրինակ, մեկտեղ և մեկ տեղ և այլն), բայց մի՞թե նրանք միավորված են,
որ նորից բաժանվեն կամ քայքայվեն։ Այդպիսի բաժանումը մեծ մասամբ
լինում է արհեստական ու ձևական։ Այսպես. մեկտեղ կցական բարդությունը
կազմված է մեկ թվականից ու տեղ գոյականից և ունի «միասին, համատեղ»
իմաստը. հմմտ. «Նրանք փոքրիկ էին՝ երեխան ու կատուն, Մեկտեղ խաղում
էին տախտակների վրա...»։ Արդյոք նույն բնականությամբ կհնչի, եթե ասենք
կազմիչ մասերի անջատումով՝ «...Մեկ տեղ խաղում էին տախտակների վրա»։
Իհարկե՝ ոչ։ Դրա հարկն էլ չկա, քանի որ ունենք օրինականացած ու «բնա-
կանացած» մեկտեղ բառը։ Ուրիշ բան է, եթե մեկ-ը և տեղ-ը գործածենք
իբրև լրացում-լրացյալ՝ որպես շարահյուսական կենդանի բառակապակցու-
թյուն, ինչպես՝ «Ճանապարհորդելիս նա գնացքում զբաղեցրել էր մեկ տեղ»։
Այս դեպքում մեր մտքով անգամ չի անցնի ընդունել, թե այս նախադասու-
թյան մեջ տեղ ուղիղ խնդիր որոշյալը և նրա մեկ որոշիչը այդպիսի գործա-
ծություն են ստացել մեկտեղ բարդության քայքայումով։ Դրանք իրականում
լրացում-լրացյալ են դարձել իբրև միմյանցից բոլորովին անկախ բառեր։
Ծիշտ է, կան այնպիսի կցական բարդություններ, որոնց մեջ կազմիչ մասերի
շարահյուսական կապը որոշ չափով կենդանի է, և նրանցից կազմված բա-
ռակապակցությունն ու բարդության կազմիչների անջատ գործածությունը
կարող են զուգահեռություն ունենալ (հմմտ. «Ղաղարը բո հորեղբայրն է» և
«Ղաղարը քո հոր եղբայրն է»), բայց այդ դեպքում էլ տարբերությունը ակն-
հայտ է լինում ըստ շարահյուսական միջավայրի։ Հորեղբայր-ը իբրև մեկ ամ-
բողջական բառ հոգ է ընդունել ամբողջության համար, դրված է ուղղական հո-
լովով, ստորոգելիական վերադիր է և ունի ին հատկացուցիչը, որը վերաբե-
րում է բառային այդ ամբողջությանը։ Մինչդեռ բո հոր եղբայրն է արտահայ-
տության մեջ հոր և եղբայրն առանձին բառաձևեր են, և հոգը վերաբերում է
միայն եղբայր բառին, որը ուղղական հոլովով է դրված ու ստորոգելիական
վերադիր է միայնակ. ո՞ր-ը սեռականով է, նրա հատկացուցիչն է. բո հատ-
կացուցիչը վերաբերում է ոչ թե ո՞ր եղբայրն բառակապակցությանն ամբող-
ջովին, այլ՝ միայն հոր բառաձևին, և ազատ կերպով կարելի է դա փոխարի-
նել ստացական հոգով, որը կվերաբերի միայն հոր բառաձևին՝ հորդ եղբայրն
(է)։ Իսկ բարդության մեջ դա անհնարին կլինի։ Եթե նույնիսկ ունենայինք

հարադրական բարդություն (հոր եղբայր), ապա այդ դեպքում ևս առաջին եզրում ստացական հոգի գործածությունը հնարավոր չէր լինի, այլ դա կլիներ շարահյուսական աղատ բառակապակցության մեջ, ինչպես վերը տեսանք: Դա նույնիսկ որոշ անբնականությունամբ կհնչի ամբողջ հարադրության համար վերջին եզրում դրվելով, ասենք՝ հոր եղբայրը:

Նման իրողությունները ևս, որ առկա են մեր լեզվում և դիտված են, նույնպես գալիս են համոզելու, որ կցական բարդություններն ստեղծված են չբայթավելու համար: Եվ, բացի դրանից, կցական բարդություններից կարելի է ցույց տալ հարյուրավոր օրինակներ, որոնց կազմիչ մասերի նույնիսկ սոսկ ձևական անջատումը անբնական ու անհեթեթ է դառնում, ինչպես՝ գեղ-գեղալ (գեղ գեղալ), փայփայել (փայ փայել), գոռգոռալ (գոռ գոռալ) և այլն, էլ չենք խոսում հնչյունական փոփոխություն կրածների մասին, ինչպես՝ ծամ-ծըմել, վազվզել, քաշքշել, փորփրել և այլն: Այլև պետք է նկատի ունենալ, որ բարդ բառերի շատ օրինակներ կան, որոնք կազմված են կցականների սկզբունքով, սակայն իբրև բառային ամբողջություններ այնպիսի իմաստներ են ստացել, որ ներկայանում են որպես իսկական բարդություններ: Այսպես. ծուռքաք, ծուռփիք. նեղսիրտ բառերը (և սրանց նման ուրիշները) կազմված են որոշիչ-որոշյալի (խոսքիմասային առումով՝ ածականի և գոյականի) միավորումով՝ ծուռ քաք, ծուռ փիք, նեղ սիրտ, բայց իբրև ամբողջական բառեր նշանակում են «այդպիսի հատկանիշ ունեցող»։ Ըստ այդմ՝ ծուռքաք նշանակում է ոչ թե «ծուռ թաթ», այլ՝ «ծուռ թաթ ունեցող», այդպես էլ՝ ծուռփիք՝ «ծուռ քիթ ունեցող», նեղսիրտ՝ «նեղ սիրտ ունեցող, նեղսրտող» և այլն: Եվ ճիշտ է վարվում Մ. Աբեղյանը, երբ այդպիսիները տեղադրում է իսկական բարդությունների մեջ¹⁹: Հիշենք նաև, որ նա, քննելով մեր լեզվի անհոդակապ իսկական բարդությունները, նրանց մի մասի վերաբերյալ նշում է. «Այսպիսով իսկական բարդությունը նույնանում է կցական բարդության հետ»²⁰: Սա իրական փաստերից բխեցված ճիշտ միտք է: Իրոք, մեր լեզվի արդի շրջանում շատ դեպքերում չնչվում են իսկական և կցական բարդությունների սահմանները, և դրանց դատումն էլ դառնում է ոչ ճիշտ կամ արհեստական: Եվ հասկանալի է, որ այսպիսով դժվարություններ են առաջ գալիս ուսուցողական պայմաններում: Բայց անկախ այս հանգամանքներից էլ անհնարին է ժխտել այն բացահայտ ճշմարտությունը, ըստ որի կազմության ընդհանուր բնույթով ինչպես իսկական, նույնպես և կցական բարդությունները համադրական կազմություններ են և այդպիսի հորինվածքով հակադրվում են հարադրություններին: Այսպիսի առավել ընդհանուր խմբավորումների մեջ, այնուամենայնիվ, չեն կորչում ըստ կազմավորման աստիճանի կատարված տեսակավորումները, քանի որ ինչպես վերն էլ նշեցինք, նրանք չեն անտեսվում, այլ համապատասխանաբար ներառվում են այդ երկու խմբերի մեջ:

Այժմ գանք բառաձևերին, որոնք վերաբերում են ձևաբանական մակարդակին և նույնպես կարող են դրսևորվել թե՛ վերլուծաբար, թե՛ համադրաբար: Այդ իրողությունները ևս բխում են լեզվի գործադրման նպատակայնությունից: Մտքերի ձևավորման ու հաղորդման համար կազմվում են նախադասություններ, որոնց մեջ բառերը ըստ համապատասխան հարաբերություն-

¹⁹ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 179:

²⁰ Նույն տեղում:

ների կապակցվում են միմյանց հետ: Որոշ կարգի բառեր (խոսքի մասեր) քերականական փոփոխությունների են ենթարկվում: Այդ փոփոխությունները բառերի շարահյուսական կապակցմանը ծառայելով հանդերձ՝ միաժամանակ այդ բառերին հատուկ քերականական ղանադան նշանակություններ արտահայտելու համար են. այլ կերպ ասած՝ դրսևորում են քերականական որոշ կարգեր (կատեգորիաներ): Այդ փոփոխությունները, այսպիսով, կապակցական-կիրառական դերով ծառայում են շարահյուսությանը, իսկ իրենց արտահայտության բնույթով ու քերականական նշանակությունների դրսևորումով վերաբերում են ձևաբանությանը: Այդ իրողությունները դիտելով ձևաբանական տեսանկյունից՝ նկատում ենք, որ քերականական համապատասխան նշանակություններ արտահայտելու համար ղանադան ԲԱՌՈՒՅՔՆԵՐ ենթարկվում են փոփոխությունների և այդ ձևափոխություններով ներկայանում որպես ԲԱՌԱՃՆԵՐ: Եվ այստեղ է, որ այդ բառաձևերը կարող են հանդես գալ հորինվածքային տարբերություններով՝ համադրական ու վերլուծական կազմություններով²¹:

Այսպես. գիտենք, որ ժամանակակից հայերենի (այլև ուրիշ լեզուների) բային հատուկ է խոնարհումը: Բայական բառույթը խոնարհվելով ղանադան ձևափոխությունների է ենթարկվում: Այդ ձևափոխություններն ինքնանպատակ չեն, այլ դրանցով արտահայտվում են խոնարհմամբ դրսևորվող բայական կարգերը՝ եղանակը, ժամանակը, դեմքը, թիվը, որոշ առումով՝ կերպը: Չմոռանանք նշել նաև, որ բայերի, ինչպես և ուրիշ խոսքի մասերի մեջ կան քերականական այնպիսի իմաստներ, որոնք հատուկ ձևափոխությամբ չեն արտահայտվում, մնում են միայն քերականական իմաստաբանության շրջափակներում կամ էլ հանդես են գալիս ուրիշների հետ՝ քերականական համանունությամբ:

Դիցուք տրված են հետևյալ օրինակները: Այստեղ մենք ունենք երկու բառաձևեր, որոնք, սակայն, ներկայացնում են մեկ՝ հետևյալ բառույթը, այսինքն՝ նույն հետևյալ բառույթի տարբեր բառաձևերն են և ստացվել են նրա խոնարհմամբ:

Ածանցավոր կազմությամբ ա լծորդության պատկանող շեղոք սեռի այդ բայը խոնարհվելով արտահայտել է եղանակային (սահմանական), կերպա-ժամանակային (առաջինը՝ անցյալ անկատար, երկրորդը՝ անցյալ կատարյալ), դիմային (առաջին), դեմքի թվի (եղակի) քերականական նշանակություններ: Հորինվածքային ընդհանուր բնույթով, սակայն, այդ բառաձևերը տարբեր են: Եթե հետևյալ ձևում այդ նշանակություններն արտահայտված են չիմքի փոփոխությամբ (հետաց) ու վերջավորության (ա) կցումով, ապա հետևում էի ձևում՝ հետևում դերբայի և էի օժանդակ բայաձևի հարադրումով: Այդուհանդերձ՝ հետևում էի մեկ ամբողջության մեջ համարվում է մեկ բառաձև, հետացա բառաձևին հավասար իրավունքներով: Իբրև բառաձև հետացա համադրական կազմություն ունի, իսկ հետևում էի՝ վերլուծական: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, համադրականությունն ու վերլուծականությունը ձևաբանական մակարդակում են: Այստեղ հետևում էի կազմությունը մեղ ներկայանում է իբրև մեկ բառաձև. դա հետևյալ բայի քերական-

²¹ Մեր լեզվի բառաձևերի այդպիսի կազմությունների մասին տե՛ս նաև է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 156:

նական մի ձևն է, քանի որ նրա կազմիչ մասերի միավորվածությունը քերականական միավորվածություն է: Իբրև բառեր (բառապաշարային միավորառություններ) հեռանալ-ը և եմ-ը տարրեր են ու միմյանցից անկախ: Դրությունն այլ է, սակայն, ձևաբանական մակարդակում: Հեռանալ բայի հեռանում դերբայական ձևը միայնակ չէր կարող արտահայտել վերը նշված քերականական բոլոր իմաստները, այդ պատճառով էլ նրան հարադրվել է եմ բայի համապատասխան ձևը, որը, կարելի է ասել, այստեղ յուրահատուկ կերպով կատարում է վերջավորության դեր: Բայց քանի որ այն իր այդպիսի լիակատար օժանդակ դերով հանդերձ ոչ թե կցվել, այլ հարադրվել է, ուստի դերբայի հետ ստեղծած նրա միությունը վերլուծական միություն է՝ քերականական հոգի վրա: Այդպիսի միավորվածության նպատակը ոչ թե բառային կազմի մեկ նոր միավորի՝ նոր բառույթի ստեղծումն է, այլ արդեն գոյություն ունեցող այդպիսի մեկ բառույթի ձևափոխությունը՝ քերականական զանազան իմաստների արտահայտումով, ըստ մեր օրինակի՝ հեռանալ բայական բառույթի խոնարհումը:

Հստակ ու ճիշտ պատկերացման համար խիստ կարևոր նշանակություն ունի պարզաբանումն այն հարցի, թե ինչպիսի՞ հարադրությունը պետք է համարել ձևաբանական միավոր և ձևաբանորեն ձանաչել իբրև վերլուծական կազմություն, որտեղից էլ պետք է բխի նրա գիտական սահմանումը: Այդպիսի միավորը պետք է ունենա առնվազն երկու պայման՝ ա) կազմիչ մասերից մեկը պետք է հանդես գա ոչ թե բառային, այլ բացահայտ քերականական դերով՝ հարադրային պահանջվող քերականական նշանակությունները օժանդակորեն արտահայտելու համար, բ) քերականական եղած բոլոր նշանակությունների միասնականացումով այդպիսի միավորվածությունը պետք է մտնի հիմնական բառի քերականական հարացույցի մեջ՝ իբրև հարացուցային մեկ անդամ: Ըստ այդմ՝ ձևաբանական վերլուծական միավորը բառի (բառույթի) հարացուցային այնպիսի անդամն է, որի մեջ կազմիչ մասերից մեկը՝ որպես օժանդակ հարադիր, հանդես է գալիս միմիայն բերականական նշանակությունների արտահայտման նպատակով. որպիսի նշանակությունները ձուլվում են մեկ ամբողջության մեջ: Պարզ է, որ այդպիսով ձևաբանական վերլուծական միություններում քերականական բոլոր նշանակությունները ներկայանում են իբրև մեկ ձևավորված բառույթի վերաբերող նշանակություններ:

Այստեղ շոշափելով ձևաբանական վերլուծական կազմությունների պատմական կազմավորումների խնդիրը, այլ միայն մոտենալով կացութային (ստատիկ) առումով՝ կարող ենք ասել, որ այդպիսի միավորների ղեկավարումն անգամ չի կարող լինել շարահյուսական անդամադատ բառակապակցությունների մասին, քանի որ այստեղ կազմիչ մասերից մեկը, ինչպես նշեցինք, միայն օժանդակ դեր ունի:

Հայտնի է, որ նշանավոր գիտնական Ա. Ա. Պոտեբնյան բայի լիակատար քերական ժամանակ-ների ձևավորման մեջ հատկապես ընդգծում էր «մաքուր ձևական բայի» գոյության դերը²², Ա. Ի. Սմիրնիցկին նույնպես վերլուծական ձևերի մեջ լիիմաստ բառին հարադրվող օժանդակ բառը համարում է նրա քերականական ձևի արտահայտիչ, շենց սա էլ նա ընդունում է վերլուծական

²² Հմտ. А. А. Потебня, Из записок по русской грамматике, т. I—II, М., 1958, էջ 119:

ձևերի և շարահյուսական աղատ կապակցությունների տարբերակման հիմք: Ուստի, ըստ նրա բնորոշման՝ վերլուծական այդպիսի կազմությունը մեկ ամբողջական բառ (բառաձև) է և ոչ թե բառակապակցություն²³: Գերմաներենի նյութի հիման վրա քննելով վերլուծական բայաձևերի հարցը՝ շարահյուսական կապակցություններից դրանք տարբերելու առումով՝ Մ. Մ. Գուխմանը այլ հատկանիշների շարքում իբրև առավել ընդհանուր ու բնորոշ հատկանիշներ մատնացույց է անում նաև այն, որ վերլուծական կառույցները բնորոշ են «իդիոմատիկությամբ» ու անքակտելիությամբ, նշանակության ընդհանրացածությամբ՝ անկախ բայի բառային բնույթից. դրանց հիման վրա էլ նրանք մտցվում են հարացուցային շարքի, այսինքն՝ բառի ձևերի համակարգի մեջ²⁴: Իհարկե, այս դիտողություններն ընդունելի են, քանի որ տարբեր կողմերից բնութագրում են ձևաբանական վերլուծական միավորը:

Ձևաբանական վերլուծականությունը ցայտուն գծերով իրեն զգալ է տալիս հատկապես հայերենի խոնարհման համակարգում, այն էլ գրավոր լեզվի բոլոր շրջաններում՝ գրաբարում, միջին հայերենում, աշխարհաբարում (արեւելյան ու արեւմտյան), ինչպես նաև բարբառներում, իհարկե, յուրաքանչյուրում տարբեր չափով: Թեև գրաբարը ընդհանրապես բնորոշ է համադրականությամբ (ու թեքականությամբ), բայց նրա բայի խոնարհման համակարգում զգալի տեղ են գրավում վերլուծական ձևերը՝ նախ հիմնականները, կազմաված անցյալ ու ապառնի դերբայների և եւ օժանդակ բայի հարադրումով, ինչպես՝ տեսեալ եմ, տեսեալ էի, տեսեալ իցեմ, տեսեալ է(իմ), տեսեալ է(իմ), տեսեալ իցէ (իմ), տեսաճեւոց եմ, տեսաճեւոց էի, տեսաճեւոց իցեմ..., ապա՝ անցյալ դերբայով և լինել օժանդակ բայով կազմավորները՝ քուլեալ լինիմ, քողեալ լինէի, քողեալ լինիցիմ և այլն: Այստեղ հարցը չենք խորացնում և հարկ չենք համարում հոգեւոր ծանրաբեռնել մեր լեզվի այլ շրջաններից ու բարբառներից վերցված օրինակներով, մանավանդ որ այդպիսիները մատնացույց ենք արել այլ առիթով²⁵:

Ժամանակակից արեւելահայ գրական լեզվի բայական համակարգում վերլուծական բայաձևեր են և՛ եմ, և՛ լինել բայերով ու դերբայներով կազմավորող դիմավոր ձևերը: Եւ օժանդակ բայը, ինչպես հայտնի է, հարադրվում է անկատար (—ում մասնիկով, տալ, գալ, լալ բայերի համար՝ նաև —իս մասնիկով), ապառնի, վաղակատար և հարակատար դերբայներին. այդ երկու կազմիչ մասերի հարադրությամբ, այդպիսով, կազմվում են սահմանական եղանակի ութ ժամանակաձևերը՝ ներկան (նստում եմ), անցյալ անկատարը (նստում էի), ապառնին (նստելու եմ), անցյալ ապառնին (նստելու էի), վաղակատարը (նստել եմ), անցյալ վաղակատարը (նստել էի), հարակատարը (նստած եմ), անցյալ հարակատարը (նստած էի), որտեղ դերբայի բառային իմաստի հետ բերված բերականական նշանակություններին միանում են օժանդակ բայի բերած բերականական նշանակությունները, ստաց-

²³ См. А. И. Смирницкий. Аналитические формы, «Вопросы языкознания», 1956, № 2, էջ 43:

²⁴ См. М. М. Гухман, Критерии выделения глагольных аналитических конструкций из других типов словосочетаний, «Морфологическая структура слова в языках различных типов», М.—Л., 1963, էջ 200—201:

²⁵ См. А. А. Абрахамян, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953:

վում է հարացուցային ամբողջական անդամ՝ վերլուծական կազմությամբ։ Վերլուծական կազմություն ունեն նաև պայմանական կամ ենթադրական եղանակի դիմավոր ձևերը՝ ժխտական խոնարհմամբ, որոնք ըստ կազմության հակադրվում են դրական ձևերին, բանի որ վերջիններս համադրական կազմություններ են։ Հմտ. կգնամ և շեմ գնա, կգնաս և շես գնա, կգնա և չի գնա, կգնայի և չէի գնա, կգնայիր և չէիր գնա, կգնար և չէր գնա, այլև՝ հոգնակին։ Այս դեպքում կազմության բնույթը փոխվում է։ Օժանդակ բայը ժխտական ձևով հարադրվում է ժխտական դերբային, որը բոլոր դեմքերում անփոփոխ է մնում, փոփոխվում է օժանդակ բայը։ Կազմության սկզբունքով սահմանական եղանակի վերլուծական դիմավոր ձևերը այդպիսին են թե՛ դրական և թե՛ ժխտական խոնարհումների մեջ (նստում եմ-չեմ նստում, նստելու եմ-չեմ նստելու, նստած եմ-նստած չեմ և այլն)։ Վերլուծական կազմություններ են նաև, այսպես կոչված, երկրորդական բաղադրյալ ձևերը, որոնք կազմվում են անկատար (-իս մասնիկով), հարակատար և ապառնի դերբայների ու լինել բայի հարադրությամբ՝ գնալիս է լինում, գնացած է լինում, գնալու լինի և այլն։ Դրանցից յուրաքանչյուրը, իհարկե, դիմային մեկ ձև է. և դրանց կազմիչ մասերը նշանակության տեսակետից միասնաբար են հանդես գալիս։ Այստեղ լինել բայը օժանդակ դեր ունի, թեև ըստ խոնարհման առանձնահատկությունների որոշ ժամանակաձևերում ինքն էլ իր հերթին ընդունում է եմ բայը, բայց դա նրա խոնարհումն է, որը այլ կերպ չէր լինի։ Լինել բայը այս կազմությունների մեջ ոչ թե բառային իմաստի, այլ քերականական նշանակությունների ներմոծման համար է, ուստի դերբայով արտահայտված բառի խոնարհմանն է ծառայում։

Անշուշտ, վերլուծական յուրահատուկ կազմություններ պետք է դիտել նաև այնպիսի բայաձևերը, որոնք թեև դերբայով ու օժանդակ բայով կազմված չեն, սակայն ինչ-ինչ նշանակությունների արտահայտման համար ունեն հարադրված մաս։ Այդպիսիք են, օրինակ, ժամանակակից գրական հայերենի բայի արգելական հրամայականի և հարկադրական եղանակի դիմավոր ձևերը, որտեղ առկա է ոչ միայն հիմքի և վերջավորությունների կցումը (համադրական կազմություն), այլև մի՛ ժխտական եղանակիչի և պիտի հարկադրական եղանակիչի հարադրումը՝ մի՛ գնա, մի՛ գնաք, պիտի գնամ, պիտի գնաս, պիտի գնայի, պիտի գնայիր, պիտի գնար, այլև՝ հոգնակին։ Այստեղ, իհարկե, տարբերություն կա, բանի որ հարադրվող օժանդակ մասերը միանշանակ են. մի-ն արտահայտում է արգելականություն, իսկ պիտի-ն՝ հարկադրական եղանակի նշանակություն։ Եվ, բացի դրանից, այդ դեպքերում, ինչպես նշեցինք, բայն իր հիմնական մասով ձևափոխվում է՝ վերջավորություններ ընդունելով։ Գուցե կարելի կլիներ այսպիսի կազմությունները կոչել վերլուծական-համադրական կազմություններ։ Ընդհանրապես հայերենում բացառված չէ քերականական մեկ նշանակության համար վերլուծական կազմության մի առանձին բաղադրամասի հարադրումը։ Իբրև նմուշ հիշենք էր ժամանակային ցուցիչի հարադրումը Ուրմիայի բարբառի ներկա ժամանակի ձևերին՝ անցյալ ժամանակի գաղափար արտահայտելու համար։ Հմտ. կ'իբէս էմ («գրում եմ»), կ'իբլւ էմ էր («գրում էի»), կ'իբէս էնք' («գրում ենք»), կ'իբլւ էնք' էր («գրում էինք»)՝²⁶ և այլն։

²⁶ Հմտ. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 248—249։

Մենք առիթ ենք ունեցել պնդելու, որ հայերենի բայի մեջ պատճառականության գաղափարի արտահայտումն իրականում ֆերականական ձևակազմությունն է, ուստի նման դեպքերում այդ նպատակով հանդես բերվող հարադրումները պետք է դիտել որպես վերլուծական ձևակազմություններ և դրանք ներառել ձևաբանական վերլուծական կազմությունների մեջ²⁷։ Այս դեպքում, ինչպես հայտնի է, պատճառականության գաղափարն արտահայտվում է տալ բայի (գրաբարում՝ նաև առնել) հարադրումով՝ բերել տալ, գրել տալ և այլն, որտեղ տալ բայը հանդես է գալիս լիակատար սպասարկու դերով, և այդպիսի պատճառական բայի խոնարհումն էլ իրագործվում է նրա փոփոխություններով, քանի որ խոնարհման ենթակա բուն բայը մնում է անորոշ դերբայի ձևով (բերել եմ տալիս, բերել տամ, բերել կտամ և այլն)։ Իհարկե, ախտեղ էլ տալ սպասարկու բայն իր հերթին ունենում է խոնարհման և՛ վերլուծական, և՛ համադրական ձևեր, սակայն բոլոր դեպքերում նրա դերը քերականական է, և այն պատճառականության հետ հիմնական բայի համար արտահայտում է նաև քերականական այլ նշանակություններ։ Չմոռանալ նշել նաև, որ հայերենագիտության մեջ կա և այն կարծիքը, թե այդպիսի կազմությունները ոչ թե քերականական, այլ բառակազմական իրողություններ են, որը, իհարկե, ճիշտ չէ։

Պատճառականության այդպիսի դրսևորումը ըստ բնույթի հակադրվում է համադրական (ածանցումով) դրսևորմանը։ Որոշ բայեր զուգահեռաբար այդ երկու ձևով էլ կարող են արտահայտվել, ինչպես՝ վազեցնել և վազել տալ, մոռացնել և մոռանալ տալ և այլն։ Երբեմն էլ լինում են այդ երկու կազմությունների համակցումներ՝ ըստ հատուկ իմաստի, ինչպես՝ մեծացնել տալ (լուսանկարը մեծացնել տալ), կանգնեցնել տալ (արձան կանգնեցնել տալ) և այլն (նկատի չունենք մերժելի գործածությունները)։ Նման դեպքերում ստացվում են պատճառականության համադրական-վերլուծական կազմություններ։

Ժամանակակից արևելահայ գրական լեզվում ձևաբանական վերլուծականություն կա նաև որակական ածականների (և մասամբ մակբայների) քերականական միակ կարգի՝ համեմատության աստիճանների հարացույցում, համեմատական աստիճանում, ինչպես՝ ավելի մեծ, ավելի գեղեցիկ և այլն, որտեղ աստիճանի քերականական իմաստն արտահայտվում է ավելի սպասարկու բառով։ Այսպես էլ մակբայների համար՝ ավելի խառն, ավելի դանդաղ և այլն։ Ինչպես այս, նույնպես և գերադրական աստիճանը կարող են արտահայտվել նաև շարահյուսական միջոցներով, որոնց մասին չենք խոսում։

Ինչ վերաբերում է վերլուծականության դրսևորմանը հոլովման համակարգում, ապա սա ոչ այնքան ձևաբանական, որքան շարահյուսական բնույթ ունի, ուստի այդ հարցը կշռափենք ստորև, նախադասության անդամների վերլուծական արտահայտության համապատասխան բաժնում։

Անցնելով շարահյուսական մակարդակին՝ նախ պետք է նշենք հետևյալը։ Մեր ժամանակներում տարածված կարծիքն այն է, որ շարահյուսական միավորներ են նախադասությունը և բառակապակցությունը (լրացում-լրացյալի զուգակցությունը)։ Այդ դեպքում նախադասության անդամը իբրև ուրույն միավոր չի առանձնացվում, որը, իհարկե, ճիշտ չէ։ Այս էլ ասենք, սակայն, որ

²⁷ Տե՛ս Ա. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1-ին, էջ 565, 587 և այլն։

մեր օրերում շարահյուսական միավորների որոշման հարցում, այնուամենայնիվ, շատ վեճեր կան, և հարցը վերջնականապես լուծված չէ։ Դրա պերճախոս վկայություններից մեկը 1971 թ. ապրիլի 20—23-ը լենինգրադում կայացած՝ ժամանակակից հնդեվրոպական լեզուների շարահյուսության տեսական պրոբլեմներին նվիրված դիտաժողովում բազմազան տեսակետների արտահայտումն էր տարբեր գիտնականների կողմից²⁸։ Պետք է նշենք, որ ձիշտ է շարահյուսական ոչ թե մեկ, այլ մեկից ավելի միավորների որոնումը։

Ընդհանրապես գրեթե բոլոր ուսումնասիրողների կողմից նախադասությունն ընդունվում է որպես հաղորդակցման (խոսքային) հիմնական միավոր, բայց այն ունի կառուցվածքային բաղադրիչներ։ Սրանցից էլ պետք է նկատի ունենալ ոչ միայն բառակապակցությունը, այլև՝ նախադասության անդամը։ Այսպիսով մենք նպատակահարմար ենք դնում շարահյուսական մակարդակում ընդունել երեք միավոր՝ նախադասությունը, բառակապակցությունը և նախադասության անդամը։ Տվյալ դեպքում քննարկվող խնդրի համար կարևոր է նախադասության անդամի հարցը, քանի որ պիտի կանգ առնենք նրա արտահայտության մի առանձնահատուկ ձևի վրա։

Ծայրահեղ ձևապաշտությունը հանգեցնում է նախադասության անդամի ժխտմանը։ Եվ այդպիսի մոտեցումն իրեն զգալ է տալիս մեր օրերում, գիտական գրականության մեջ։ Այսպես, Գ. Ա. Զոլոտովան գրում է. «Նախադասության անդամները... նրա կառուցվածքային միավորները չեն։ Դրանք ավելի շուտ տրամաբանական, քան քերականական կարգեր են։ Նախադասությունը չի կազմվում նախադասության անդամներից»²⁹։ Սա սերժելի տեսակետ է։ Եթե մենք ընդունում ենք լեզվի և մտածողության դիալեկտիկական միասնությունը, ուստի և նրա արտացոլումը նախադասության մեջ, ապա բնավ չենք կարող հրաժարվել նախադասության անդամից՝ որպես շարահյուսական կարգից։ Բառույթները, բառաձևերը, երբեմն էլ սրանց զուգակցումները շարահյուսական մակարդակում քերականական այլ վերացարկմամբ կիրառական հիմունքով դառնում են նախադասության անդամներ, առանց որոնց չի կարող նախադասություն կազմվել։ Մերժելի է նաև այն տեսակետը, ըստ որի ընդունվում են միայն գլխավոր անդամներ և անտեսվում երկրորդականները³⁰։ Իհարկե, նախադասության կազմավորման ու ձևավորման մեջ իրենց դերով նրանք տարբեր են և այդ պատճառով էլ ներկայացվում են ստորակարգությամբ, բայց, այդուհանդերձ, չի կարելի մերժել երկրորդական անդամները։

Իսկ ի՞նչ է նախադասության անդամը։ Իա նախադասության այն կազմիչ մասն է, որը, ըստ ֆերականական (շարահյուսական) հարաբերության բովանդակության և կապակցական բնույթի՝ արտահայտում է մի ամբողջական պաշտոն։ Իսկ ամբողջական պաշտոններ են ենթակայի, ստորոգյալի, որոշչի, հատկացուցչի, բացահայտչի, խնդրի և պարագայի պաշտոնները։ Եվ քանի որ այդպիսի ամբողջական պաշտոնների արտահայտման նպատակով բառույթները կամ բառաձևերը հանգես են գալիս ոչ միայն առանձին, այլև զանազան զուգակցություններով, ուստի դրա հիման վրա էլ անհրաժեշտություն է առաջ

28 Տե՛ս «Филологические науки», 1972, № 1, էջ 132—134։

29 Г. А. Золотова, О синтаксической форме слова. «Мысли о современном русском языке» (ժողովածու), М., 1969, էջ 59։

30 Հմմտ. «Грамматика современного русского литературного языка», М., 1970։

գալիս վերջիններիս բնութագրման համար՝ ի տարբերություն առաջինների: Ըստ այդմ՝ լինում են այնպիսի դեպքեր, երբ շարահյուսական մեկ ամբողջական պաշտոնն արտահայտվում է երկու կամ ավելի բառույթներով կամ բառաձևերով (սրանք, իհարկե, ունեն խոսքիմասային զանազան արժեքներ): Սա այն է, ինչ որ քերականագիտությունը սահմանում է որպես նախադասության բաղադրյալ անդամ: Նախադասության անդամի այդպիսի արտահայտությունն էլ հենց կարելի է դիտել իբրև վերլուծականություն՝ շարահյուսական մակարդակում (իհարկե, նախադասության անդամի շրջանակներում):

Նախադասության անդամի բաղադրյալ արտահայտության ըմբռնումը վաղուց է հանդես եկել քերականագիտության մեջ: Հիշենք, օրինակ, Ա. Ա. Պոտեբնյայի տեսությունը բաղադրյալ անդամների մասին՝ ըստ սլավոնական լեզուների նյութի³¹: իհարկե, այդ ուսմունքի մեջ կան և այնպիսի ըմբռնումներ, որոնք արդի գիտության մեջ այլ գնահատմամբ են ներկայացվում (օրինակ, կրկնակի հոլովները որպես բաղադրյալ անդամ), սակայն կա և շատ բան, որը խիստ կարևոր է քերականագիտական արդի ըմբռնումների տեսակետից:

Վերը նշեցինք, որ ժամանակակից հայերենի շարահյուսության մեջ, օրինակ, ընդունված է բաղադրյալ ստորոգյալը: Նշումներ կան նաև այլ կարգի բաղադրյալ անդամների մասին: Սակայն դրանք չեն կապվել լեզվում հանդես եկող վերլուծականության ընդհանուր երևույթի հետ: Մինչդեռ, ինչպես ասացինք, այս դեպքում ևս գործ ունենք վերլուծականության հետ, բայց ավելի բարձր մակարդակում: Էլ չենք խոսում այն մասին, որ նախադասության այլևայլ անդամներ ևս, որ իրականում բաղադրյալ (վերլուծական) են, չեն սահմանվել որպես այդպիսին (օրինակ, համապատասխան խնդիրներն ու պարագաները):

Ո՞րն է նախադասության վերլուծական (բաղադրյալ) անդամի յուրահատկությունը: Նախադասության անդամի վերլուծական արտահայտությունը հանդես է գալիս այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում շարահյուսական հարաբերության բովանդակությունը համապատասխան կապակցության պայմաններում դրսևորել ոչ թե մեկ բառույթով կամ բառաձևով, այլ դրանց զուգակցումներով: Այդպիսի զուգակցումներում միավորվող մասերը հավասարապես լրիվ անդամական ինքնուրույնություն չեն ունենում, քանի որ գտնվում են նախադասության մեկ անդամի շրջանակներում: Հետևաբար այդպիսի զուգակցությունները տարբերվում են սովորական շարահյուսական բառակապակցություններից, որոնք լրացում-լրացյալի անդամադատ զուգորդումներն են (ինչպես՝ գրքի թերթ, աշխատասեր մարդ, կառուցել շենք, ասլոնել գյուղում և այլն):

Ուրեմն՝ նախադասության անդամի վերլուծակալությունը ըստ կապակցության բնույթի և շարահյուսական հարաբերության բովանդակության՝ իբրև մեկ ամբողջություն, արտահայտվում է տարբեր լատույթների կամ բառաձևերի զուգակցումներով:

Այսպես. ստորոգյալը շարահյուսական մեկ ամբողջական հասկացություն է, շարահյուսական կարգ, նախադասության ուրույն անդամ: Արտահայտու-

³¹ Հմմտ. А. А. Потеня, Из записок по русской грамматике, т. I—II, М., 1958:

թյան բնույթով ունենում է հակադրություններ, պարզ և վերլուծական տեսակներով: Բոլոր տիպերի բաղադրյալ ստորոգյալները վերլուծական արտահայտություններ են շարահյուսական մակարդակում: Օրինակ՝ նա գեղեցիկ է, նա գեղեցիկ է թվում, նա ուսուցիչ դարձավ, նա սկսեց խոսել, նա շարունակեց խոսել, նա շտապեց ասել, նա կարողանում է նկարել, նա աշխատում է մոռանալ և այլն: Այստեղ ընդգծված բոլոր զուգակցված բառերը հավասարազոր չեն: Ենթակային վերագրվող հատկանիշը արտահայտված է գեղեցիկ, ուսուցիչ, խոսել, ասել, նկարել, մոռանալ մասերով, որոնք ենթակային են կապվում է, թվում է, դարձավ, սկսեց, շարունակեց, շտապեց, կարողանում է, աշխատում է բառաձևերով. սրանք այդ վերագրումից բացի, արտահայտում են նաև քերականական դանդաղ լրացուցիչ իմաստներ (դեմք, թիվ, ժամանակ, եղանակ, դրանցից մի քանիսը՝ նաև լրացուցիչ եղանակավորություն, կերպավորություն և այլն): Բայց այդ բոլոր նշանակությունները յուրաքանչյուր ստորոգյալում ներկայանում են անդամային մեկ ամբողջության մեջ, ըստ արտահայտության պլանի՝ տարանջատությամբ: Այդ պատճառով էլ այդպիսի ստորոգյալները պետք է դիտել որպես շարահյուսական վերլուծական ձևեր: Վերլուծական այս կապակցությունները որպես ամբողջություններ չունեն ո՛չ ամբողջական բառություն, ո՛չ էլ բառաձևային արժեք, քանի որ կազմված չեն այդպիսի նշանակություններով: Այլ կերպ ասած՝ սրանք ոչ թե բառային կամ ձևաբանական, այլ շարահյուսական միություններ են:

Նախադասության վերլուծական անդամներ են նաև կապերի, կապական բառերի ու այլ խոսքի մասերի՝ որպես կապի խնդիրների, զուգակցություններով արտահայտվող անդամները: Վերջիններս մի քանի օրինակներ: Ես գնացի դեպի Սևան, Ես գնացի մինչև Սևան, նա կանգնած է պատի մոտ, Երեկոյան դեմ նա եկավ, Դու աշխարհի շափ սիրում ես գործը, Մարտիկները կովեցին դուցազունների պես, նա խոսում է իր ծրագրերի մասին, Ժողովում նա արտահայտվեց այդ հարցի շուրջը, Քեզ նման աշխատավորին պետք է խրախուսել: Բերված նախադասությունների մեջ ընդգծված զուգակցությունները մեկական ամբողջական անդամներ են: Այստեղ ունենք և՛ պարագաներ (տեղի՝ դեպի Սևան, մինչև Սևան, պատի մոտ, ժամանակի՝ երեկոյան դեմ, չափի՝ աշխարհի շափ, ձևի՝ դուցազունների պես), և՛ խնդիրներ (վերաբերության՝ ծրագրերի մասին, հարցի շուրջը), և՛ որոշիչ (Քեզ նման): Բոլորն էլ արտահայտված են վերլուծաբար, համապատասխան կապերի ու իրենց խնդիրների զուգակցությամբ: Ակնհայտ է, որ սրանք բառային (բառություն) միություններ չեն, որովհետև այդպիսով նոր բառեր (բառություններ) չեն ստեղծված: Սակայն կարող է հարց ծագել ձևաբանական (բառաձևային) միություններ լինելու մասին, որի հանդեպ, իհարկե, մեր մոտեցումը բացասական է: Բայց չմոռանանք, որ սրանք անդամադաս լրացում-լրացյալ կապակցություններ էլ չեն:

Իսկապես, այսպիսի միություններն ինչո՞ւ են գնահատվում իբրև շարահյուսական և ոչ թե ձևաբանական միություններ: Ամենից առաջ հիշենք, որ կապերը կոչված են՝ ա) արտահայտելու լրացուցիչ վերաբերական իմաստներ, բ) գերադաս անդամին (լրացյալին) կապելու ստորադաս անդամը (լրացումը): Ծիշտ է, կապերը իրենց նշանակությամբ ու դերով մոտենում են հոլովական վերջավորություններին, սակայն նրանք իրենց խնդիրների համար բառաձևային համակարգ չեն ստեղծում, և նրանց զուգակցությամբ նրանց

խնդիրները (կապվող բառերը) չեն ներկայանում իբրև բառաձևային ամբողջություններ, կապերի օգնությամբ հոլովված հարացուցային անդամներ: Կապերը այդպիսի միությունների մեջ իրենց բառային իմաստները պահպանում են: Այդ իմաստները որքան էլ զուրկ լինեն նյութականությունից, այնուամենայնիվ բառիմաստներ են և ավելի կոնկրետ են՝ հոլովական վերջավորությունների նշանակությունների համեմատությամբ: Այդ պատճառով էլ այդ իմաստները չեն ձուլվում կապի խնդիրների իմաստների մեջ և բառա-ձևաբանական միասնություն չեն կազմում: Այդպիսով կապերի և նրանց խնդիրների զուգակցումները ներկայանում են որպես կիրառական միություններ, ուստի պիտի գնահատվեն շարահյուսական առումով:

Սրանով չենք ուզում պնդել, թե առհասարակ վերլուծականությունը հնարավոր չէ լեզուների հոլովման համակարգում: Լինում են վերլուծական հոլովումներ և հոլովներ: Հոլովման համակարգում լինում են վերլուծականության և համադրականության համատեղումներ և այլն: Իբրև նմուշ վերլուծականության համար հիշենք օրինակ գերմաներենից: Այստեղ բառերի հոլովման համար կարևոր դեր ունի հոգերի հարադրումը: Եվ կան բառեր, որոնց հոլովումն իրագործվում է միայն հոգերի հարադրությամբ ու սրանց համապատասխան փոփոխությամբ: Իզական սեռի գոյականների հոլովման մեջ եզակի թվում հոլովի միակ ցուցիչը լինում է հոգը, որը հարադրվում է բառի անփոփոխ ձևին, այսպես, ուղղ. die Frau, սեռ. der Frau, տրակ. der Frau, հայց. die Frau: Այսպիսի հոլովները վերլուծական կազմություն ունեն: Բայց հիշենք նաև, որ գերմաներենն ունի մեր կապերի նման սպասարկու բառեր ևս (նախդիրներ, ինչպես՝ auf, nach, durch, wider, mit, gegen և այլն), որոնք, սակայն, չեն ներառվում հոլովման հարացույցի մեջ: Այստեղ հնարավորություն չունենք քննելու նաև այն հարցը, որ լեզուներում կան դեպքեր, երբ նախդիրն է դառնում հոլովի միակ ցուցիչը:

Մեր խնդրի սահմաններում մեզ մնում է արծարծել մի հարց ևս: Դա վերաբերում է տարբեր մակարդակների վերլուծական միավորների փոխհարաբերությանը: Իսկապես, և՛ տեսական, և՛ գործնական տեսակետից կարևոր է ցույց տալ, թե վերլուծական տվյալ միավորը ի՞նչ բնույթ ու արժեք ունի լեզվական հաջորդ մակարդակում: Վերլուծական կազմություն ունեցող բառությունները, եթե թեքման (հոլովման, խոնարհման) ենթակա են, ապա ձևաբանական մակարդակում քերականական ձևափոխություն են կրում ըստ մեր լեզվի օրինաչափությունների: Նրանց փոփոխություններով այս մակարդակում կարող են լինել և՛ համադրական, և՛ վերլուծական կազմություններ: Օրինակ՝ եթե վերջնենք եզան լեզու (իբրև համապատասխան բույսի անուն) գոյականը և հոլովենք, ապա կունենանք վերջավորությունների համադրումով կազմված բառաձևեր՝ եզան լեզու(ն), եզան լեզվի, եզան լեզվի(ն), եզան լեզու(ն), եզան լեզվից, եզան լեզվով և այլն: Ուրեմն այստեղ բառույթը վերլուծական հորինվածք ունի, բայց նրա բառաձևերը համադրական հիմունքով են հանդես գալիս: Այլ կերպ ասած՝ նրա բառաձևային համակարգը՝ հարացույցը, արտահայտվում է համադրական հիմունքով:

Իսկ եթե վերջնենք մի հարադրական (վերլուծական կազմության) բայ և խոնարհենք, ապա կտեսնենք, որ, ըստ մեր լեզվի օրենքների՝ նրա բառաձևերը կլինեն որոշ դեպքերում համադրական և որոշ դեպքերում էլ՝ վերլուծական բնույթի: Այսպես, կարգի բերել, կարգի բերեցի, կարգի բերեցիր, կար-

գի բերեց..., կարգի բերեմ, կարգի բերես, կարգի բերի..., կարգի բերեի, կարգի բերեիր..., կարգի կբերեմ, կարգի կբերես..., կարգի բեր և այլն: Այստեղ խոնարհումը համադրական հիմունքով է: Մինչդեռ կարգի եմ բերում, կարգի ես բերում, կարգի է բերում..., կարգի եմ բերել, կարգի ես բերել, կարգի է բերել և նման այլ ձևերում խոնարհումը վերլուծական հիմունքով է: Այսպիսով կարգի բերել բառույթը որպես բառապաշարային միավոր նույն մակարդակում վերլուծական հորինվածք ունի, բայց ձևաբանական մակարդակում նրա բառաձևային համակարգը՝ հարացույցը, մեզ ներկայանում է ձևերի կազմության և՛ համադրական, և՛ վերլուծական բնույթով:

Այժմ գանք ամենաբարձր՝ շարահյուսական մակարդակին: Այստեղ եթե վերլուծական կազմություն ունեցող որևէ բառույթ կամ բառաձև նախադասության մի ամբողջական անդամի դեր է կատարում և այդ շրջանակներում կիրառական դուգակցումներ չունի, ներկայանում է որպես նախադասության պարզ և ոչ թե վերլուծական կամ բաղադրյալ անդամ: Այդպիսին վերլուծական անդամ կարող է դառնալ այն դեպքում, երբ կիրառական հոգի վրա, նախադասության անդամի ամբողջական նշանակությունն արտահայտելու համար կդուգակցվի մեկ ուրիշ բառի կամ բառաձևի հետ:

Այսպես. «եզան լեզվով զանազան հիվանդություններ են բուժում» նախադասության մեջ եզան լեզվով բառաձևը նախադասության մեկ անդամ է՝ միջոցի անուղղակի խնդիր: Որպես այդպիսին նա վերլուծական (բաղադրյալ) խնդիր չէ, որովհետև նույն բառն է փոփոխվել ու նախադասության մեկ անգամ դարձել: Մինչդեռ «եզան լեզվի միջոցով զանազան հիվանդություններ են բուժում» նախադասության մեջ ունենք եզան լեզվի միջոցով վերլուծական (բաղադրյալ) խնդիրը, որովհետև կիրառական հոգի վրա միջոցի խնդրի ամբողջական նշանակությունն արտահայտելու համար եզան լեզու բառի եզան լեզվի բառաձևին դուգակցվել է միջոցով կապական բառը, որը և՛ նոր իմաստ է բերում, և՛ միաժամանակ այդ լրացումը կապում է լրացյալին (բուժում են ստորոգյալին): Նախադասության այդ անդամը մեզ ներկայանում է վերլուծական այնպիսի միավորվածությամբ, որն ստեղծվել է կիրառական հիմունքով: Կամ՝ «Այս բույսը կոչվում է եզան լեզու» նախադասության մեջ ունենք կոչվում է եզան լեզու բաղադրյալ կամ վերլուծական ստորոգյալը: Իսկ դա ոչ այն պատճառով է, որ եզան լեզու հասկացությունն արտահայտված է վերլուծական հորինվածք ունեցող բառույթով, այլ այն, որ համապատասխան հասկացությունը ենթակային վերագրելու համար ստեղծվել է մի դուգակցություն, որտեղ անդամային ոլորտի մեջ է մտել նաև կոչվում է բառաձևը՝ հանգույցի դերով: Դրանք երկուսով կազմել են մեկ ստորոգյալ:

Անշուշտ, ճիշտ է վարվում մեր քերականագիտությունը, երբ ձևաբանական մակարդակի վերլուծական ձևերը (օրինակ՝ բայի բաղադրյալ ժամանակաձևերը) նախադասության ինքնուրույն անդամ լինելու դեպքում դիտում է որպես պարզ անդամ: Սրան պետք է ավելացնել այն, որ եթե վերլուծական (հարադրական) կազմություն ունեցող բառ-բառույթը ձևաբանական մակարդակում ինչպիսի ձևափոխություն էլ կրի, նախադասության ինքնուրույն անդամ լինելիս ներկայանում է որպես պարզ անդամ: Օրինակ՝ «Բանվորը շենք է կառուցում», «Ես կարգի եմ բերում գրադարանս», «Նա ցանկացած գիրքը ձեռք բերեց» նախադասությունների մեջ հավասարապես պարզ ստորոգյալներ են կառուցում է. կարգի եմ բերում, ձեռք բերեց արտահայտությունները,

թեև կառուցում է-ն կառուցել համադրական բառույթի վերլուծական (բաղադրյալ) բառաձևն է, կարգի եմ բերում՝ կարգի բերել վերլուծական բառույթի վերլուծական բառաձևը, ձեռք բերեց՝ ձեռք բերել վերլուծական բառույթի համադրական բառաձևը: Պետք է ընդգծել, որ ձևաբանական մակարդակում հարացուցային անդամը որքան էլ տարաբաղադրիչ լինի, նախադասության անդամ դառնալիս ներկայանում է իբրև պարզ անդամ: «Նա գրեց» և «Նա գրած պիտի լինի» նախադասությունների մեջ պարզ ստորոգյալներ են թե՛ գրեց-ը և թե՛ գրած պիտի լինի-ն:

Հարցերը, իհարկե, շատ են: Մեր նպատակն էր ցույց տալ, որ վերլուծականությունը իբրև հորինվածքային իրողություն հանդես է գալիս լեզվի բառապաշարային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում՝ յուրաքանչյուրում տարբեր արժեքներով:

АНАЛИТИЗМ НА РАЗНЫХ УРОВНЯХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Доктор филол. наук А. А. АБРААМЯН

(Резюме)

Выражения различных значений в языке проявляются как синтетическим, так и аналитическим образом. В языкознании при описании языковых явлений обычно об аналитизме говорится в связи с выражением морфологических значений. На основании фактов армянского языка в статье делается попытка рассмотреть проявления аналитизма на разных уровнях — лексическом, морфологическом и синтаксическом. На этих уровнях аналитическое выражение зависит от определенной цели: на лексическом уровне — выражения лексического значения, на морфологическом — морфологического, на синтаксическом — значения члена предложения, причем составной член предложения (сказуемое, дополнение, обстоятельство, определение) рассматривается как аналитическое выражение соответствующего синтаксического содержания.